ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի հուլիսի 3-ի N 4 - Լ

Ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կանոնադրության 17-րդ կետի 3-րդ ենթակետով և լսելով Համալսարանի բակալավրի և մագիստրատուրայի առկա և հեռակա համակարգերի կրթական ծրագրերի ուսումնական պլանների հաստատման հարցը (զեկ. պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյան).

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի.
   ա/ բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի թվով 44 մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն հավելված 1-ի,
   բ/ բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի թվով 38 մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն հավելված 2-ի,
   գ/ մագիստրատուրայի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի թվով 55 մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն հավելված 3-ի:
   դ/ մագիստրատուրայի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի թվով 6 մասնագիտությունների ուսումնական պլանները համաձայն հավելված 4-ի:
2. Հանձնարարել՝
   ա/ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչությանը /պետ՝ Մկրտիչ Ավագյան/ մինչև սույն թվականի հուլիսի 15-ը ավարտել ՀՊՄՀ բակալավրի և մագիստրոսի առկա և հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի լրամշակումը և ներկայացնել ՀՊՄՀ գիտական խորհրդի հաստամանը,
   բ/ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժնին /պետ՝ Շուշանիկ Արշակյան/ հաստատված ուսումնական պլանները ներդնել ուսումնական ծավալների, ծանրաբեռնվածությունների հաշվառման և բաշխման միասնական էլեկտրոնային համակարգ, 2018-2019 ուսումնական տարվա ամբիոնների տարեկան ուսումնական աշխատանքների ծավալները, ֆակուլտետի և ամբիոնի կողմից ներկայացվող պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան անհատական բեռնվածությունները հաստատել սույն ուսումնական պլանների առարկայակազմի համապատասխանությամբ,

գ/ ֆակուլտետների դեկաններին՝ մինչև սույն թվականի օգոստոսի 31-ը ավարտել ՀՊՄՀ բակալավրի և մագիստրոսի առկա և հեռակա ուսուցմամբ բարձրագույն կրթական մասնագիտությունների մասնագրերի լրամշակումը, հաստատել ֆակուլտետային խորհրդներում և ներկայացնել ՀՊՄՀ գիտական խորհրդի վավերացմանը,

դ/ ամբիոնների վարիչներին՝ մինչև սույն թվականի օգոստոսի 31-ը կազմակերպել քննարկումների շարք և հաստատել ՀՊՄՀ մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի առկա և հեռակա ուսուցմամբ բարձրագույն կրթական ծրագրերի լրամշակված մասնագրերում առկա դասընթացների առարկայական նկարագրերը: Առարկայական նկարագրերում վերջարդյունքները համապատասխանեցնել ՄԿԾ-ների մասնագիտական գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական և ընդհանրական փոխանցելի կարողությունների կրթական ելքային արդյունքներին:

3. Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Միեր Մելիք-Բախշյանին ապահովել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված հանձնարարականների կատարումը:
4. Սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանները ուժի մեջ են մտնում 2018-2019 ուսումնական տարվանից /գործում է առաջին կուրսից/:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Համալսարանի ռեկտորին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ